ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/21» ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան 19.09.2019թ.
ժամը՝ 11:00

Հանձնաժողովի նախագահ՝
ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար (հանձնաժողովի նախագահ)՝ Գ. Ավետիսյան

Անդամներ՝
ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ՝ Ն. Հայրապետյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նյութատեխնիկական ապահովման և գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա. Շաբոյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ֆինանսատնտեսական վարչության գլխավոր մասնագետ՝ Լ. Միքայելյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ֆինանսատնտեսական վարչության առաջատար մասնագետ՝ Հ. Շեկոյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՎԱ ԳԿ գնումների կազմակերպման բաժնի գնումների գործակալ՝ Ա. Պետրոսյան

«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստին ներկա էին հանձնաժողովի նախագահը, 3 անդամը և քարտուղարը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու» մասին թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետը նիստը համարվել է իրավազոր:

1. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/21» ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին համաձայն որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

1.1 Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած տեղեկատվության, «ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:

1.2 Գնահատող հանձնաժողովը բավարար գնահատեց ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով նախատեսված հիմնավորող փաստաթղթերը և ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը հրավերով նախատեսված պահանջներին, որը արտացոլվեց նախապես տրամադրված գնահատման թերթիկներում:

1.3 «ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին մասնակցություն չունեցող անձանց ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

2. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/21» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների

հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին

<u>Հանձնաժողովը որոշեց.</u>

2.1. Վարչապետի աշխատակազմի (Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի) կարիքների համար կնիքների և դրոշմակնիքների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնանշման հարցման գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ» ՍՊԸ-ին:

2.2 Հաստատել ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3 Մասնակցի հետ համապատասխան չափաբաժնի մասով կնքել պայամանագիր՝ անգործության ժամկետի ավարտից հետո:

2.4 Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.5 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին անգործության ժամկետի ավարտից հետո առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի, կամ բանկային երաշխիքի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

3. Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Անդամներ՝	Գ. Ավետիսյան	ԳՊ/ԳԱՊ
	Ն. Հայրապետյան	ԳՊ/ԳԱ
	Ա. Շաբոյան	ԳՊ/ԳԱ
	Լ. Միքայելյան	ԳՊ/ԲԱ
Քարտուղար՝	Ա. Պետրոսյան	ԳՊ/ՄՀմ